

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՆԴԱՓՈԽՄԱՆ ՄԻ ԱՐՏԱՌՈՑ ՕՐԻՆԱԿ

Հայ ժողովրդի պատմությունը, նրա ստեղծած մշակույթը դարձել են հայ, ռուս, եվրոպացի հայադեմոստների, արևելագետների ու կովկասագետների ուսումնասիրության առարկան: Դիտական շրջանառության մեջ է մտել հարուստ հայագիտական գրականություն, ուր լուսաբանված են հայ ժողովրդի դարավոր պատմության հետ առնչվող բազմաթիվ կնճռու հարցեր, վեր են հանված հայ մշակույթի գանձերը:

Հայագիտության հարցերով դրադույում են նաև ժամանակակից թուրք պատմաբաններից ու մանք: Բայց ինչպե՞ս: Դժբախտաբար, նրանք պատմական փաստերը կամ անտեսում և կամ դրանք ծուռ հայելու մեջ են ներկայացնում: Դրա պատճառը դժվար չէ ըմբռնել, երբ ծանոթանում ևս այդ աշխատությունների բովանդակությանն ու դրանց կցված առաջաբաններին: Հաճախ այդ հեղինակները բացելուց խոսում են իրենց հետամտած նպատակների ու այդ աշխատությունները գրելու շարժառիթների մասին: Այսպես՝ էս'ատ Ուրասը «Հայերը և հայկական հարցը պատմության մեջ» աշխատության առաջաբանում գրում է. «...Հնագույն ժամանակաշրջաններից մշակույթների օրրանը հանդիսացող այս երկրամասում (իմա՝ Անատոլիայում) տարբեր անուններով պետություններ են հիմնվել ու մշակույթներ զարգացվել: Բոլոր ժամանակներում անվանի մարդիկ ու նվաճողներ սնած այս հողը՝ Անատոլիան, յուրաքանչյուր ազգ ցանկություն է ցուցաբերել իրեն վերագրել... Հայերը ևս Անատոլիայի մի մեծ մասի վրա իրենց բնիկ լինելու և երկրի քաղաքական պատմության, մշակույթին իրավունք ունենալու հավանություն են ունեցել»: Եվ ահա թուրք պատմաբանները մարտի են նետվում զրկելու հայ ժողովուրդը ամբողջ աշխարհի կողմից ճանաչված իր այդ իրավունքից:

Բանն այն է, որ պանթուրքիզմն ու պանիսլամիզմը շարունակում են սնել բուրժևական մտավորականության և այդ թվում պատմաբանների մի մասի քաղաքական և գիտական միտքը: Դեռևս 1920-ական թվականներից պատմաբանների առաջ խնդիր դրվեց ապացուցել, որ թուր-

քերը Փոքր Ասիայի հնագույն ժողովուրդն են: Դիտականներին կոչ արվեց ժամանակակից թուրքերի նախահայրերին փնտրել Փոքր Ասիայի հնագույն բնակիչներ խեթերի (հեթիթների) մոտ: Եվ ահա մի շարք «պատմաբաններ», փոխանակ ցույց տալու, թե ինչպիսի էթնիկական խմբեր ձուլվեցին թուրքերի հետ պատմական տարբեր ժամանակաշրջաններում՝ սելջուկ-թուրքերի Փոքր Ասիա թափանցելուց հետո, սկսեցին կեղծել, խեղաթյուրել պատմությունը, իրենց ոգևորության կամ մոլուցքի մեջ շատ հեռուն գնալով: Խեթերին «թուրքացնելուց» հետո (դրան ամենևին չխոչընդոտեց խեթերեն լեզվի լեզվորոպական լինելու հանգամանքը), նրանք անցան խուրրիական ցեղերին և սրանց ուրարտացի ազգակիցներին, որոնց լեզուները շատ գիտնականներ են ուսումնասիրել, շատ լեզունների հետ են համեմատել, բայց թուրքերեն լեզվին նման նրանց մեջ ոչինչ չեն գտել: Բայց հոգ չէ. հերթի էին կանգնած դեռ շումերները, որոնց լեզուն, ինչպես հայտնի է, չի հարում ներկայումս հայտնի որևէ լեզվախմբի: Թուրք պատմաբանները բավարար համարեցին այդ հանգամանքը շումերներին ևս «թուրք» հայտարարելու համար:

Այս բոլորը սակայն խաղալիք է այն պնդման առջև, թե Փոքր Ասիայի բնակիչները թուրքեր են եղել սկսած դեռ պալեոլիթից: Հայտնի է, որ ցեղակազմավորման, էթնոգենեզի պրոցեսները սկսվել են անհունորեն ազնի ու ժամանակաշրջանում, և այդ է պատճառը, որ աշխարհի ոչ մի ժողովուրդ մինչև օրս հավանություն չի ունեցել իր արմատները տանել-հասցնելու մինչև կես միլիոն տարիներով մեզնից անջատված պալեոլիթը, իր ժողովրդի ու իր լեզվի ներկայացուցիչներին տեսնելու այն նախամարդկանց մեջ, որոնք դեռ նոր-նոր սկսել էին քարե գործիքներ պատրաստել և բացատրվում էին բացականչություններով: Այս տեսակետից թուրք պատմաբանները մեծ «երախտիք» ունեն համաշխարհային գիտության առջև:

Ահա այսպիսի «արդյունքների» են կարողանում հասնել որոշ պատմաբաններ, ոտնահարելով գիտության մեջ ընդունված ու արմատավորված հետազոտական ձևերն ու մեթոդները և ծառայեցնելով իրենց պետքերին մարդաբանության

¹ Es'at Uras. Tarihte Ermeniler ve ermeni meselesi, Istanbul, 1950, էջ III:

խեղաթյուրված «տվյալները»։ Մարդարանությունը, որ ինքնին հետաքրքիր գիտություն է, կարող է ոասիստի ձեռքին դառնալ ամենասուկալի զենքերից մեկը, ուղղված այլ ժողովուրդների դեմ, փաստ, որն իր ահավոր ապացույցները գտավ գերմանական ֆաշիզմի նողկալի «տեսություն» և քստմենլի պրակտիկայի մեջ։

Գիտությունը քայլ առ քայլ, փաստ առ փաստ եկել է այն անվիճելի եզրակացության, որ սկյութները իրանական ցեղեր են։ Եւայց ահա նրանք հայտարարվում են թուրքեր, Ավելին, թուրքեր են հայտարարվում պարթևները, իրանալեզու ժողովուրդների այդ կարկառուն ներկայացուցիչները։ Չգիտես, զայրանալ, թե ծիծաղել։

Թուրքական պատմագրության զինանոցում կոփված այս բոլոր զենքերով զինված հանդես է գալիս ահա նաև պատմաբան Կըրդիօղլի Ֆահրեդդինը։ Չնայած իր զրքի նեղ վերնագրին², հեղինակն իրականում յուրովի շարադրել է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը հնագույն ժամանակաշրջաններից սկսած մինչև XVI դարի սկիզբը (I հատոր)։ Աշխատության մեջ լայնորեն օգտագործված են Հեքի Տոգանի, Շեմսեդդին Գյունալտայի, Մ. Յընանչի, էս'ատ Ուրասի և այլ պանթուրքիստ պատմաբանների աշխատությունները։

Հարգացնելով իր նախորդների առաջ քաշած կեղծ թեզերը, հեղինակը խորացնում է դրանք սեփական տեսակետներով և «փաստարկներով»։ Հայաստանում ամենուր և պատմական բոլոր էտապներում թուրքեր գտնելու հատուկ նպատակադրումով։

Թե ինչ շարժառիթներով ու ինչ նպատակով է գրել իր այս աշխատությունը մեր հեղինակը, զաղափար ենք կազմում կարդալով նրա զրքի առաջաբանը։ «Իմ այս աշխատությունը պատասխան է այն քաղաքական պրոպագանդային,—ասում է նա,—որ բուլղերկյան Ռուսաստանը տանում էր 1945 թ.։ Այդ պրոպագանդայի նպատակը մեր ձեռքից Կարսն ու Արդահանը խլելն էր։ Գիրքը,—շարունակում է նա,—ուղղված է այն հայ ու վրացի գիտնականների դեմ, որոնք պնդում են այս երկրամասի նկատմամբ ունեցած իրենց ինչ-որ պատմական իրավունքների մասին»։

«Սկսած 1717 թ., Վենետիկի մի փոքրիկ կրդգում սերաստացի Մխիթար աբրայի հիմնադրած «Հայ Մխիթարյան միաբանության» գիտ-

նականները, Կ. Պոլսի, Թիֆլիսի և հատկապես Եվրոպայի կենտրոններում կրթություն ստացած ու հայոց ազգային պատմությունն ու մշակույթը պրոպագանդող հայ լուսավորիչները,—գրում է նա,—Արևելյան Անատոլիայի (իմա՝ Հայաստանի—Մ. Զ.) սելջուկներից առաջ եղած պատմությունն ու մշակույթի հուշարձանները միայն և միայն իրենց են վերագրել և այդ մասին եվրոպական լեզուներով աշխատություններ են հրատարակել»³։ «Պետերբուրգի գիտությունների ակադեմիան էլ,—շարունակում է նա,—պաշտպանել է այս կեղծ թեզը և ձգտել է այն ծառայեցնել ցարական Ռուսաստանի հետամուտած նվաճողական քաղաքականությանը Մերձավոր Արևելքում։ Գրվել ու հրատարակվել են բազմաթիվ հաստատվոր հատորներ, որոնք այսօր էլ դարսված են Եվրոպայի տարբեր գրադարաններում։ Պատմության բնագավառում սեփական կադրեր չունենալու հետևանքով, այդ զրքերը,—շարունակում է նա,—«...մեզ վախ են ներշնչել ուստիպել նահանջել»⁵։

Այսօր, ուրախությամբ ուզում է հավաստիացնել Կըրդիօղլին իր բնթերցողներին, վախենալու ոչինչ չունենք արդեն։ Իմ քսանամյա երկարատև ուսումնասիրությունները բերել են ինձ այն եզրակացությանը,—գրում է նա,—որ Արևելյան Անատոլիայում անցյալում իշխած համարյա բոլոր հայ նախարարական տների ներկայացուցիչներն ունեն թուրքական ծագում⁶։ «Առաջավոր Ասիայի և առհասարակ Թուրքիայի պատմության համար խոշոր նշանակություն ունեցող այս գյուտի համար... հազար փառք եմ հղում բարձրյալն Աստծուն ու ինձ շատ երջանիկ եմ համարում»⁷,—ավելացնում է նա։

Իսկ որն է այդ «գյուտը»։ Արհամարհելով փաստերը և տրամաբանությունը, հեղինակը հայտարարում է, թե թուրքական «Դեղե-Կորկուտ» էպոսում հիշատակված հերոսները հայ հին նախարարներն են։ «Արևելյան Անատոլիայում (իմա՝ Հայաստանում—Մ. Զ.) թրքության պատմությունը սկսում է ոչ թե 1064 թ. Ալփ Արսլանի նվաճումներով, այլ Նախնադարյան համայնական կարգերից (ընդգծումը մերն է—Մ. Զ.)»,—գրում է նա։ Թե ինչու այսքան պարզ ու հասարակ ճշմարտությունը անհայտ է եղել գիտությանը, միայն ցավով ու ափսոսանքով կարելի է նշել։ Այս «ճշմարտության» մասին պետք է իմանալ արար աշխարհը,—ասում է նա,— ուստի և իմ առաջ նպատակ եմ դրել

² Fahrettin Kirziloglu, Kars tarihi, c. I, Istanbul, 1953. (Ֆահրեդդին Կըրդիօղլի, Կարսի պատմություն, հատ. I, Սամարալ, 1953 թ.)։

³ F. Kirziloglu, Kars tarihi, ալսուհ հետև՝ „Kars tarihi“, էջ XIII.

⁴ Նույն տեղում, էջ XIV—XV.

⁵ Նույն տեղում, էջ XV։

⁶ Տե՛ս Նույն տեղում, էջ XVI։

⁷ Նույն տեղում, էջ XVI։

⁸ Նույն տեղում։

«Կարսի պատմություն»-ը ֆրանսերենի թարգմանել⁹։

Կրրզիօղլին ևս Մերձավոր Արևելքի ու Փոքր Ասիայի հնագույն բնակիչներ շումերներին, էլամացիներին, խուրրիներին համարում է 4-րդ հազարամյակում Միջին Ասիայից գաղթած պրոտոթուրքեր¹⁰։ Ինչպես տեսնում ենք, Կրրզիօղլին այստեղ նոր խոսք չի ասում, այլ փաստորեն կրկնում է իր նախորդներին։ Ուրարտական պետության կազմավորման գործում մեծ տեղ հատկացնելով խուրրիներին, իսկ սրանց էլ համարելով պրոտոթուրքեր, Կրրզիօղլին գրչի մի հարվածով տիրանում է Ուրարտուին ու նրա ստեղծած մշակույթին¹¹։ «Կար մի ժամանակ,— գրում է «Կարսի պատմության» հեղինակը,— որ ուրարտական մշակույթը վերագրում էին հայերին, ու անվանում „Armeniaque“։ Դա արվում էր որոշ քաղաքական նկատառումներով։ Այգ գիտնականները,—ասում է նա,— ծառայում էին ուսական իմպերիալիզմի շահերին։ Այգ նույն նպատակներին է ծառայել ու ծառայում նաև Արևելյան Անատոլիային «Հայաստան» (Arménia, Arménie) աշխարհագրական անուն տալը¹²։ Հայերը ոչ մի պատմական իրավունք չունեն տեր դառնալու ուրարտական մշակույթի գանձերին, ի լուր աշխարհի հայտարարում է մեր հեղինակը։ Ուրարտերենը ըստ նրա անմիջական առնչություն ունի թուրքերենի հետ։ Ինչպես, զարմացած կհարցնի ընթերցողը։ Շատ պարզ, կպատասխանի թուրք հեղինակը։ Քանի որ ուրարտերենը հայերեն չէ¹³, այլ ազլյուտինատիվ մի լեզու, ինչպիսին թուրքերենն է։

Ուրարտագիտության զարգացման ներկա էտապում ոչ ոք չի պնդում, թե ուրարտերենը հայերեն է, խոսվում է միայն ուրարտա-հայկական առնչությունների մասին, բայց ի՞նչ կապ կամ առնչություն կա ուրարտերենի և թուրքերենի միջև, որոնք բաժանված են իրարից գրեթե երկու հազարամյակով։ Ուրարտուն թուրքական հայտարարելով, թուրք պատմաբանները ավելացնում են՝ «Ըստ երևույթին, հայեր անունով ժողովուրդ գոյություն չունի» (Ա. էնգին)¹⁴։

⁹ Նույն տեղում։

¹⁰ Նույն տեղում, էջ 27—28։

¹¹ Նույն տեղում, էջ 57։

¹² Նույն տեղում, էջ 58։

¹³ Առաջինը ընդգծեց A. H. Sayce-ը, որ ուրարտերենը չի կարելի նույնացնել հայերենի հետ։ Տե՛ս „Journal of the Royal Asiatic Society“, հատ. XV, էջ 382։

¹⁴ Arin Engin, Etil tarihi, Atatürk-kent (İstanbul), 1961, էջ 24։

18 Հանգու, Ա։ 1

Կրրզիօղլու, ինչպես և Շեմսեդդին Գյունալ-տայի¹⁵ մոտ շեշտվում է, որ հնդեվրոպացի արմենները փոքրամասնություն էին կազմում տեղացիների նկատմամբ։ Այդ ճիշտ է, կեղծիք է միայն այն, որ հայ ժողովրդի հիմնական ենթաշերտը կազմող խուրրի-ուրարտացիները «պրոտոթուրքեր» են եղել։

Ուրարտական պետությունը, ի վերջո, անկում ապրեց, իսկ ի՞նչը փոխարինեց նրան։ Հեղինակը շտապում է պնդելու, թե ուրարտա-թուրքական պետությանը հաջորդեց մի ուրիշը՝ սկյութացիների, կամ ինչպես նա է սիրում գրել, թուրքո-սակերի պետությունը։

Արհամարհելով գիտության տվյալներն այն մասին, թե սկյութացիները հնդեվրոպացի, մասնավորապես իրանական ցեղախմբեր են, պանթուրքիստ պատմաբանները, ինչպես ասվեց, «թուրքեր» են դարձնում և նրանց¹⁶։ Մ. թ. ա. 665 թ. սկյութական արշավանքը ըստ մեր հեղինակի ունենում է այն հետևանքը, որ նրանք հաստատվում են այստեղ՝ Անդրկովկասում և թողնում իրենց անջնջելի հետքերը տեղանունների վրա։ Այսպես՝ «Գուդարքը» ոչ այլ ինչ է, եթե ոչ մ. թ. ա. 665 թ. սակերի հրամանատար Դադայի կամ Գոգի անվան արտացոլումը։ Ստրաբոնի հիշատակած Դոգարենեի հիմքում պիտի ընկած լինի Գուգ-աքքը, այսինքն՝ Գուգի ժողովուրդը՝ գուգեցիներ։ Գուգ արմատին ավելացված «ար»-ը ինչպես ավարների, սուվարների, խազարների, թաթարների մոտ եղած «ար» վերջավորությունն է, նշանակում է սողամարդիկ, ժողովուրդ¹⁷։ «Ջաջուր» լեռը,—ասում է նա,—Գուդարքի աղավաղված ձևն է, իսկ Գոգ առաջնորդի անվան հետ պետք է կապել նաև «Կախեթ» տեղանունը, որ նշանակում է «Կախի» (Գագի) երկիր¹⁸։

«Այսօր էլ կարսեցիները Ախալցխայի, Արդահանի և Ախալքալաքի տեղացիներին շարունակում են գազավանցիներ անվանել. սա մի կենդանի վկայություն է այն մասին, որ նրանք գազարացիների թոռներ են»—գրում է Կրրզիօղլին։

Այս բոլորից հետո մնում է ավելացնել, որ Կրրզիօղլին տեղյակ չէ, թե իր ընտրյալ Գագան (իսկական անունն է Գուգգու), նրա վկայակոչած ասսուրական սեպագիր աղբյուրներում

¹⁵ Ş. Günel, Romalılar zamanında Kapadokya, Pont ve Artaklad Krallıkları, Ankara, 1951, էջ 556, 560, 562։

¹⁶ Z. V. Togan, Umumi Türk tarihine giris, c. I, İstanbul, 1946, էջ 23, 25, 26, 34։ Նույնը պնդվում է Ֆ. Կրրզիօղլու մոտ։

¹⁷ „Kars tarihi“, էջ 83։

¹⁸ Նույն տեղում։

հանդես է դալիս ոչ թե որպես սկյութների (հեղինակի երևակայության մեջ՝ թուրքերի) հրամանատար, այլ որպես փոքրասիական լիգիա (սեպագիր աղբյուրներում լուղղու) երկրի թագավոր, որը քաջ հայտնի էր հույներին՝ Գիգես անվան տակ¹⁹։ Այսպիսով, մի թյուրիմացության (կամ կեղծիքի) վրա բարդվում է մի ուրիշը։ Այս շենքը կարող է հաջողությամբ մրցել իր ամրությամբ խաղաթղթերից կառուցված շինության հետ։

Որ թուրքա-սակական ցեղերը տարածված են եղել ամբողջ Արևելյան Անատոլիայում, այսինքն՝ Հայաստանում,—ասում է նույն հեղինակը,—երևում է նաև հայկական պատմական այն ավանդությունից, ըստ որի հայերի նախահայրեր են համարվում ավանդական Ասքանազն ու Թորգոմը։ Ասքանազը իշկանազ-Իշկոզա—սկյութն է, իսկ Թորգոմը՝ թուրքն է,—գրում է նա²⁰։

Այսպիսով, ինչպես դժվար չէ կռահել, Կրդի-օղլին կարգապահ պանթուրքիստ է և ամենայն հետևողականությամբ կիրառում է իր նախորդների մշակած մեթոդները և իր հերթին իր լուսման է մտցնում այդ ընդհանուր զինանոցը։ Հայ ժողովրդի պատմությանը քիչ թե շատ ծանոթ անձնավորությունը կնկատի, որ Կրդիօղլու մոտ տիրապետողը բացարձակ կեղծիքն է։

Սակայն առաջ անցնենք։ Եթե ամբողջ Հայաստանում տարածված էին սակերը, ապա ուր մրնացին հեղեվրոպացի արմենները, որոնց գոյությունը ի վիճակի չէ ժխտելու արդի թուրք պատմագրությունը։ Պարզվում է, որ արմենների ըստեղծած «Արմենիան» դա Մուշի-Խյաթի շրջակայքն է միայն²¹։ Ի տարբերություն Կրդիօղլուց, Շ. Գյունալտայը Արմենիան տեղադրում է Արարատյան դաշտավայրում²²։ Ի դեպ, նշենք նաև, որ արդի թուրք պատմագրության և ոչ մի ներկայացուցիչ Հայաստան անունը, որպես պատմական, աշխարհագրական հասկացողություն չի օգտագործում։ Էս'ատ Ուրասը, որը ի տարբերություն մյուսներից, մի ամբողջ գլուխ է նվիրել պատմական Հայաստանի աշխարհագրությանը՝ վերաշարադրելով Սեն-Մարտենին²³, արել է այդ, նպատակ ունենալով հայտարարելու,

թե եվրոպական գիտության մեջ այդչափ մանրամասն լուսարանված Հայաստանի պատմական աշխարհագրությունը լոկ մի ֆիկցիա է, քանի որ հայերը ինքնուրույնությունից զուրկ և պատմական բոլոր էտապներում էլ որոշակի պետական սահման չունեցող մի ժողովուրդ են եղել։

Տիգրան II-ի ժամանակաշրջանի պատմության հարցերին ընդարձակ էջեր են նվիրել և՛ Ֆ. Կրդիօղլին, և՛ Շ. Գյունալտայը։ Վերջինը Տիգրան Մեծի մասին խոսում է և կապաղովկիայի, և Պոնտոսի, և Արտաշեսյան Հայաստանի պատմությունը գրելիս²⁴։ Նշենք սկզբից, որ Տիգրանը հայ չի համարվում, այլ պարթև, հետևաբար՝ թուրք։ «Անվիճելի ճշմարտություն է,—գրում է նա,—որ Տիգրանը ծագումով հայ չէ»²⁵։ Եթե դա այդպես է, ապա ինչու այդքան հակակրանքով ու ատելությամբ է խոսում հեղինակը հայոց թագավորի մասին։ Շատ պարզ է, նախ, հափշտակված ապրանքը այն դիրք չունի, ինչ որ վաստակածը, և երկրորդ, մեր պատմաբանը համոզված չէ, որ իրեն կհաջողվի կուլ տալ այդ պատառը։

Հավատարիմ իր պանթուրքիստական կոնցեպցիային, Կրդիօղլին, ինչպես մի քանի այլ ուսկցիոն թուրք պատմաբաններ, Արշակունիներին նույնպես տալիս է թուրքական ծագում։ Պարթև Արշակունիներին նա նույնացնում է օղուզ թուրքերի Բայրնդուր ցեղի հետ։ Ճարմանալի է։ Շատ պարզ է, ասում է հեղինակը, Բայրնդուր նախնական ձևը հետագայում տվել է Բայրն — պարն — պարթ = պարթև-ճ։ Իսկապես՝ ու, որ մեծ գյուտ է։

Իսկ ինչ վերաբերում է հայ Արշակունիներին, ապա վերջինների իշխանության ժամանակաշրջանի հայոց պատմությունը Կրդիօղլու մոտ շարադրված է հետևյալ ընդհանուր վերնագրի տակ՝ «Հին օղուզները Արշակունիներից մինչև իսլամը (մ. թ. ա. 120—մ. թ. հետո 646 թ.)»²⁷։ Ի՞նչ օղուզների մասին է խոսքը։ Հեղինակը մեզ տալիս է հետևյալ բացատրությունը. «Հայ Արշակունիները... հին օղուզներից ու թուրքմեն-թուրքերից էին»²⁸։

Իսկ ի՞նչ պատահեց սակա-թուրքերի հետ։ Ուր չքացան նրանք։ Այդ մասին լուր է հեղինակը։ Պատմության ասպարեզ են բարձրացվում հին օղուզները։ Պիտի ենթադրել, որ հին օղուզները եկան ու գրկախառնվեցին իրենց սակա եղ-

¹⁹ Sбъ И. М. Дьяконов, Ассирио-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, № 3, էջ 236։

²⁰ «Kars tarihi», էջ 93։

²¹ Նույն տեղում, էջ 131—132։

²² Ş. G u n a l t a y, Romalılar zamamında Kapadokya, Pont ve Artaksiad Kirallıkları, էջ 622—627։

²³ St. M a r t i n, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1818։

²⁴ Ş. G u n a l t a y, Նույն տեղում, էջ 492—522, 578—610 և հտ.։

²⁵ Նույն տեղում, էջ 578։

²⁶ Նույն տեղում, էջ 137։

²⁷ Նույն տեղում, էջ 135—212։

²⁸ Նույն տեղում, էջ 137։

բայրենների հետ: Չէ՞ որ ամբողջ Ասիայի պատմությունը, ինչպես մենք տեսանք, թուրքերի պատմությունն է:

Կրդիօղլու կատարած այս բոլոր «գյուտերը» հիմնված են, ինչպես ասվեց, «Դեդե-Կորկուտ» էպոսի վրա: Քննարկենք, թե ինչ է իրենից ներկայացնում «Դեդե-Կորկուտ» էպոսը և ցույց տանք, թե արդյոք որևէ կապ գոյություն ունի՝ էպոսի հերոսների և հայ նախարարական տների միջև, ինչպես պնդում է Կրդիօղլին:

«Դեդե-Կորկուտ» էպոսը («Kitabi Dede Korkud») բաղկացած է մի առաջարանից և 12 հիքայեններից՝ պատմվածքներից²⁹:

էպոսում աշխարհագրական միջավայրը Անդրկովկասն ու Հայաստանն է: Վ. Վ. Բարտոլդը նշում է, որ էպոսի հերոսները սելջուկ ֆեոդալներն էին, որոնք Հայաստանի ալպյան մարզագետիններում քոչվորական ու կիսաքոչվորական կյանք էին վարում³⁰: Հայտնի է, որ Վ. Վ. Բարտոլդը բազմիցս անդրադարձել է «Դեդե-Կորկուտ» էպոսին ու բոլոր դեպքերում էլ ընդգծել, որ էպոսը Անդրկովկասում ու Հայաստանում ձևավորվել է 11-րդ դարից հետո, երբ սկսել է Փոքր-Ասիայի թուրքացման պրոցեսը: Ծիշտ է, օղուզ դուցազնների գովեբգուբյանն ու փառաբանությանը նվիրված այս էպոսը նախքան Կովկասում իր վերջնական ձևավորում ստանալը, դեռևս առանձին գրույցներով տարածված էր Միջին Ասիայում ավելի վաղ ժամանակաշրջանում: Սակայն հայտնի է, որ առհասարակ ոչ միայն «Դեդե-Կորկուտ» էպոսը, այլև «օղուզ-նամե»-ները ընդհանրապես 15-րդ դարի խմբագրություններ են: Այսպես՝ նույն դարի թուրք հեղինակ Յազըչի-օղլի Ալին սուլթան Մուրադ 2-րդի համար գրեց նման «օղուզնամե»-ներ³¹:

Հենվելով «Դեդե-Կորկուտ»-ի վրա, Կորդիօղլին հայ Արշակունիներին և նախարարական տներին տալիս է թուրքական ծագում: Որպեսզի ընթերցողն այստեղ զաղափար կազմի, թե ինչպիսի պրիմիտիվ ու ծիծաղելի ձևով է թուրք հեղինակը նույնացնում էպոսի հերոսներին հայ նա-

խարարների հետ, բերենք նրա կատարած մեջբերումը «Դեդե-Կորկուտ» էպոսից աննշան կրթաբանական: «...Վերև հիշատակված Գյուկ-ալպիանը վախճանվում է ու այս աշխարհից հեռանում: Նրա որդիներից Կալգար-խանը, Թուրմըշ-խանը իրենց երկիրը բաժանեցին իրար մեջ, յուրաքանչյուրը մեկ վիլայեթի տեր դարձավ: Սրա եղբայրները... Խորասանից դուրս գալով եկան Անի և Կարս. անհավատ վրացիների հետ մարտի բռնվեցին ու զրավեցին Բիֆլիսո...»

Նրանք կրոն, դավանանք չգիտեին, սակայն ճանաչում էին աստծուն, նրանց օղուզներ էին անվանում... Նրանց մոտ հիշատակվում էին դուսի օղուզներ (թաշ-օղուզ), ներսի օղուզներ (իշ-օղուզ)³²: Իշ-օղուզ բեգերին՝ Ղազան խան (ս.Մեծ) հորջորջված Արշակունի վաղարշի որդի Խոսրով 1-ը), Բուդաղ բեգ (Միանդակ-Մանդակունի), ...Նամ-Սորդին բեգ (Շամ-Շուգեցի Օրբելյան), Բայարակ բեգ (թագադիր պաշտոն վարող Բագարատ-Բագրատունի), Կարա-Կոնակ բեգ (Զինաստանից եկած Կոնակ և Մամիկ անուններով երկու հոնացի իշխաններ, Մամիկոնյաններ) էին ասում: Թաշ-օղուզ բեգերին Օրավազ կոչա (Սյունիքի իշխաններ), Դոնդար-բեգ (Փայտակարանի իշխաններ), Աման բեգ (Մուկաց և Ամատունի իշխաններ, քուրդ իշխաններ), Ավշար բեգ (Արծրունի իշխաններ), Դոկար բեգ (Աղվանքի իշխաններ), Ռուստամ բեգ (Սիսականներից՝ Ռշտունի) էին անվանում: Ընդամենը 90 հազար զինվորականներ էին: «Դեդե-Կորկուտը (Անակի որդի Գրիգոր Լուսավորիչ) սրանց հոգևոր առաջնորդն էր»³³:

Այս տողերը կարդալիս ընթերցողների մոտ բնականաբար հարց կառաջանա՝ արժե՞ր արդյոք կանգ առնել նման բացարձակ անհեթեթությունների վրա: Չարժե՞ր, անշուշտ, եթե նկատի չունենայինք այն հանգամանքը, որ այս բոլոր տեսակետները բարձրացվել են պաշտոնական աստիճանի³⁴:

²⁹ Թաշ-Օղուզն ու Իշ-Օղուզը դեռևս Միջին Ասիայի օղուզների ցեղային կազմակերպություն արտահայտություն էին, որի մասին արդի թուրք շատ պատմաբանների մոտ կան վկայություններ (տես Husevlin Namik Orkun, Turk tarihi, c. I, Istanbul, 1946, էջ 65): Սակայն Կրդիօղլին, ըստ երևույթի, համաձայն չէ նրանց հետ և «Դեդե-Կորկուտի» այս հատվածի հիման վրա կազմել է 4-5-րդ դարերի Հայաստանի բարտեզը, բացահայտորեն կեղծելով պատմությունը:

³⁰ «Kars tarihi», էջ 143-144.

³¹ Այսպես՝ Վորս հատորանոց «թաքիխ»-ում («պատմություն»), որը արտահայտում է պաշտոնական տեսակետ, պատմու-

²⁹ Այս մասին տես Վ. Մ. Ժիրմունսկու հետաքրքիր հաղածը տպված թուրքերեն թարգմանությամբ «Belleten»-ում, V. M. Jirmunskiy, Kitabi Korkud ve oguz destani gelenegi. Belleten, c. XXV, s. 100, 1961, էջ 609:

³⁰ В. В. Бартольд, Турецкий эпос и Кавказ, «Язык и литература», том V, Ленинград, 1930, էջ 11-12:

³¹ В. В. Гордлевский, Государство сельджукидов Малой Азии, М.—Л., 1941, էջ 8-9:

Բերված քաղվածքից կարելի է առանց գրծվարության նկատել, որ այստեղ խոսքը XI դարի սելջուկների սասին է և ոչ մի կապ ու առնչություն չունի հայ հին նախարարական տեքերի պատմության հետ: Նախ՝ տեքստում հիշատակվում են Անին ու Կարսը: Անին կառուցվեց, ինչպես հայտնի է, X դարի 60-ական թթ.: Այնուհետև՝ այնտեղ օգտագործել են արաբերեն բառեր օրինակ. keferē—անհավատ, asker—զինվոր, şeyh—հոգևոր, առաջնորդ և այլն, որը մի պարզ վկայություն է այն մասին, որ օղուզնամեն XI դարի բանավոր խմբագրություն է: Իսկ Լթն տեքստում գրված է «նրանք կրոն, դավանանք չգիտեին...», որի վրա շեշտված կանգ է առնում հեղինակը, ցույց տալու համար, որ դա մինչ իսլամի ժամանակաշրջանի մասին է վկայում, ապա այդ նախադասությունը ասում է լուր այն մասին, որ Միջին Ասիայի թուրքերը իսլամն ընդունելուց հետո էլ աչքի չէին բնկնում կրոնական մոլեռանդությամբ: Արաբները միջինասիացի թուրքերին «կրոնից թույլ» (Türkman zayıf-ül-iman*) մարդիկ էին համարում³⁵:

Ֆ. Կրրգիօղլին այսքանով էլ չի բավարարվում: Հավատարիմ ինքն իրեն, նա շարունակ Հայաստան է տեղափոխում նորանոր թուրքական ցեղեր, այս անգամ արդեն հյուսիսից: Նա այստեղ չի խորշում լուրովի վկայակոչելու հայ մատենագիրներին: Այսպես՝ մ. թ. ա. 127—114 թթ. Կարսի նահանգ են տեղափոխվում Վանանդ (Բալանգ) բուլղարները և Կարսակ կամ Վարսակ թուրքերը ու թողնում երկրում իրենց անունով բուլղարների առաջնորդ Վունդի անունով Կարսի շրջակայքը կոչվում է Վանանդ: Եվ իբրև ապացույց բերվում է Մ. Խորենացուց հետևյալ հատվածը. «...Իսկ յետոյ վասն հատուածի Վղնդուր Բուղարայ Վնդայ, բնակելոյ ի տեղին, յանուն նորա անուանեցաւ Վանանդ. և անուանին շինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչև ցայժմ»³⁶:

Քյան բաղմաթիվ աղաղակող խեղաթյուրումների կարելի է հանդիպել. «Թուրք ամենաթիշը յոթն հազար տարի է, ինչ զալով անդավորվել է իրեն համար սրբավայր հանդիսացող Անատոլիայում» (sic!). Տես, „Tarih“, հաա. I, Istanbul, 1932, էջ 30:

³⁵ Leon Cahun, Introduction a l'histoire de l'Asie, Paris, 1896, էջ 80:

³⁶ Տես Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, II, էջ. Տիգրս, 1913, 109: Այդ մասին տես նաև V. Binnitianou, La plus ancienne mention arménienne a propos des Bulgares colonisés dans l'Arménie ancienne, „Studia et acta Orientalia“, I (1958), № 14, էջ 12—30:

«Հայկական սկզբնաղբյուրներում «Բարկար» (նկատի ունի Պարխար լեռները—Մ. Զ.) լեռներ կոչված և Ծորոխի ու Սև ծովի արանքում գտնվող երկրամասի բնակիչները այս Ծորոխի բուլղարների հետնորդներն են»,—պնդում է հեղինակը:

Ամբողջ հարցը նրանում է, թե կարելի՞ է ասել, որ առաջին դարերում բուլղարական ցեղեր կային Հյուսիսային Կովկասում, որպեսզի այնտեղից թափանցեին Հայաստան: Այդպիսի եզրակացություն անելը միանգամայն սխալ կլինի:

Մ. թ. 3-րդ դարում, ինչպես դա նախորդ դարերում էր, նորանոր «թուրքական» ցեղեր շարունակում են թափանցել Անդրկովկաս ու Հայաստան³⁷: Այս դարում, գրում է Ֆ. Կրրգիօղլին, Խլաթի ու Մուշի շրջակայքն ամբողջությամբ թուրքացվում է: Չմոռանանք, որ մի ժամանակ հեղինակն «Արմենիան» այստեղ էր տեղադրում: Այս շրջանը դառնում է Արևելյան Թուրքեստանից՝ Չինաստանից եկած Մամիկ և Կոնակ կոչված երկու թուրք (sic!) իշխանագուհիների կալվածքը: Այստեղ նա վկայակոչում է Մ. Խորենացուն, Սևրեոսին և այլն: Մեջ է բերված Մովսես Խորենացու «Եթէ ուստի և զիարդ ազգ Մամիկոնէից» վերնագրի տակ եղած այն վկայությունը, թե իշխանագուհի երկու եղբայրներ՝ Բղդոխ և Մամգուն, Եկել են «ղճենացն»³⁸. Սևրեոսից (ռուսերեն թարգմանություն) մեջ է բերվում այն տեղեկությունը, թե Չինաստանից եկած երկու եղբայրները անվանվում են Մամիկ և Կոնակ³⁹, դա ավելի ճիշտ պետք է համարել,—գրում է Կրրգիօղլին: Այս երկու եղբայրները «Դեղև-Կորկուտ»-ում անվանվում են «Կոնակ-բեգ» կամ «Կարակոնա»: Կրրգիօղլին ավելացնում է նաև մի «կ» և դարձնում Կարա Կոնակ: Նրանց երկիրն Արևելյան Անատոլիայում կոչվում էր Տարոն-Տուրուբերան, որը պետք է հասկանալ՝ Տարոն Դուրու-Բարան կամ Բարան-Յուրդու, Բարանի երկիր և կամ ուղղակի Բարանլու—Կարա-Կոյունլու: Ահա այսպես, հեղինակը կատարելով նորանոր «գյուտեր», Տարոնի հայ բնակչության մեջ տեսնում է XV դարում այստեղ հաստատված Կարա-Կոյունլու թուրքմենների նախահայրերին⁴⁰:

Պանթուրքիզմը այն աստիճան է բթացնում Կրրգիօղլուն, որ նա հայոց լեզուն նույնպես թուրքերեն է համարում: Սակայն ինչպե՞ս բացատրել հայոց լեզվի հնդեվրոպական լինելը:

³⁷ „Kars tarihi“, էջ 162—168:

³⁸ Մ. Խորենացի, էջ 221—223:

³⁹ „История епископа Себеоса“, пер. Ст. Малхасянца, Ереван, 1939, էջ 19:

⁴⁰ „Kars tarihi“, էջ 169:

Երրորդը զտնում է «ելքը»։ Հայոց լեզվի մեջ հնդեվրոպական արմատների գոյութիւնը պատճառն այն է, ասում է նա, որ տառերի գոյտը տեղի ունեցավ Արշակունյաց պետութեան քաղաքական անկախութեան վերացման ու Պարսկաստանի գերիշխանութեան հաստատման պայմաններում։ Այլ կերպ ասած, պարսիկները բռնի միջոցներով լեզվափոխ են դարձրել օղուղ թուրքերին⁴¹։ Մեսրոպ Մաշտոցը ինքը մի թուրք գիտնական էր, առանց ամաչելու գրում է նա, քանի որ ծնվել էր Տարոն գավառի Հացեկաց գոյուղում (չէ որ Մուշի-Խլաթի շրջակայքը, ինչպես մենք տեսանք, ըստ Կրդիօղլու, ամբողջութեամբ բնակեցված էր Կարա-Կոյունլու թուրք-մեններով)⁴²։ Յիսկ աչքի առաջ ունենանք Արշակունիների և 3-րդ դարում Վանա լճի հյուսիս-արևմուտքում գտնվող Տարոն (Մուշ-Խլաթ) գավառում հաստատված Մամիկոնյանների թուրք լինելը, ապա լինի գրաբարում, լինի «մեսրոպյան այբուբենում» թրքութեան հետքեր փնտրելը միանգամայն տեղին է⁴³։ «Կան շատ հանգամանքներ ենթադրելու,—շարունակում է նա,— որ այս տառերը Կարա-Կոյունլուների հետ բերվել են Տարոն և հոների շեղագիր տառերից են ստեղծվել»⁴⁴։ Ապա նաև՝ հայերեն տառերի «ծագման հարցում հաշվի պիտի առնել այն,— բերում է նա մի շմեցուցիչ փաստարկ ևս,— որ սուրբ Մեսրոպին այբուբենի դասավորման ժամանակ օգնել է սուրբ Սահակը, որի պապը՝ Կարա-Կոյունլուների ցեղից՝ 250 թ. Չինաստանից (Կաշկարյան երկիր) այստեղ գաղթած Անական էր»⁴⁵։

Այսպես ձևագունը գլորվելով ավելի ու ավելի է աճում։ Ամբողջ IV—V դարերում հայ ժողովրդի հերոսական պայքարը Սասանյան իրանի դեմ Կրդիօղլու մոտ փոխարինվում է «Հին օղուղների մղած պայքարով»⁴⁶։

Վարդան Մամիկոնյանը, տեսնելով, որ թե հայերի, այլ թուրքերի ժողովրդական հերոսն է։ Կարա-Կոյունլու դուռնազն Վարդանը հենց ինքը առասպելական Քյորօղլին է,—գրում է այդ հեղինակը։ V դարի Սասանյան Պարսկաստանի դեմ ուղղված ժողովրդա-ազատագրական շարժում-

ները «...ըստ երևույթին պատճառ են դարձել օղուղների կողմից Քյորօղլու վիպերգի ծնունդին»,—եզրակացնում է նա։ Ավելորդ է այստեղ կանգ առնել նման անհեթեթությունների հերքման վրա։ Կարելի է միայն հիշեցնել նրան, որ նույնիսկ թուրք պատմագրության ընկերության 3-րդ կոնգրեսում Պ. Հ. Բորատավը իր «Քյորօղլին որպես պատմական դեմք» զեկուցման մեջ շեշտում էր, որ Քյորօղլին հանդես է եկել XVI դարի վերջին և եղել է ջալալիների ականավոր ղեկավարներից մեկը⁴⁷։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի պատմության հարցերը շոշափելիս էլ «Երրորդը օղուղ քաջատրությունների համար բնորոշ են պանթուրքիզմը, պանիսլամիզմը, շաղախված կեղծիքով և հակասական դրույթներով»։

Բագրատունիները ևս թուրքեր էին և շատ մոտ կանգնած սելջուկներին, նրանց և Վելուկների թողած ճարտարապետական հուշարձանների միջև կան շատ ընդհանուր կողմեր,—գրում է Ֆ. Կրդիօղլին,—«մոռանալով», որ գոյութիւն ունի այնպիսի երևույթ, ինչպիսին է մշակութային փոխազդեցությունը և որ նշված ընդհանրությունը բխում էր նրանից, որ փոքրասիական սելջուկների թողած ճարտարապետական հուշարձանների հեղինակները իրենք հայերն էին⁴⁸։

Բագրատունիներին հայտարարելով թուրքեր, հեղինակն ինքն էլ չի հավատում իր գրածին։ Ըստ պարզ նկատվում է, երբ նա շարադրում է հայերի պայքարի դրվագները Ատրպատականի (Ադրբեջանի) արաբ էմիրների դեմ։ Հեղինակի ամբողջ համակրանքը էմիրներ Աֆշինի, Յուսուֆի և այլոց կողմն էր, հայերի կրած ամեն մի պարտություն ուրախություն է պատճառում նրան։ Նա ամեն կերպ ձգտում է նսեմացնել Բագրատունյաց թագավորության ունեցած քաղաքական նշանակությունը, ինչպես դա տեսանք նաև Տիգրան 2-րդի դեպքում։ Պատճառներն էլ նույնն են։

Ահա և 11-րդ դարը. թուրք-սելջուկների Փոքր Ասիա ներթափանցման ժամանակաշրջանը. թուրք սելջուկները եկան Փոքր Ասիա ու գրկախառնվեցին այստեղ իրենց «թուրք» եղբայրների հետ։ Դարձյալ պրիմիտիվ կեղծիք։ «Եթե արշավող թուրք-սելջուկ հորդանների ու «քրիստոնյա օղուղների» (իմա՝ հայերի—Մ. Զ.) միջև ռազմական ընդհարումներ տեղի են ունեցել, ապա դա եղել է անգիտակցաբար, չիմանալով»։

⁴⁷ Söğ. Pertev Naili Borata, Köroğlunun tarihi şahsiyeti, III TTK, էջ 124—130։

⁴⁸ В. А. Гордлевский, Государство селджукидов Малой Азии, էջ 103։

⁴¹ Նույն տեղում, էջ 348։

⁴² Նույն տեղում, էջ 187—188։

⁴³ Նույն տեղում։ Զեքի Վ. Տողանը հակառակ Ֆ. Կրդիօղլու կարծիքի զտնում է, որ հոների այսպես կոչված Օրխանյան ալբուբենը Առաջավոր Ասիայից է բերվել Միջին Ասիա (տես, Z. V. Togan, նշվ. աշխ., էջ 49)։

⁴⁴ Նույն տեղում։

⁴⁵ Նույն տեղում։

⁴⁶ Նույն տեղում, էջ 190—198։

որ երկու կողմն էլ նույն թուրք ցեղից են»⁴⁹,— գրում է Կրրզիօզլին:

Ահա և մի ուրիշ ահավոր կեղծիք: Եթե Մամի-կոնյանները հանդիսանում են Կարա-կոյունլու-ների նախնիները, ապա Պահլավունիները՝ Ակ-կոյունլուների: «Թուրք» մեծ գիտնական Գրիգոր Մազիստրոս Բեգը (s.l.c!) և Դիարբեքիրում հաստատված Պահլավունիները, հետագայում ընդունելով մուսուլմանությունը, հիմք դեցին Ակ-կոյունլու թուրքմենական պետության»⁵⁰: Սա մի այլանդակ կեղծիք է, որը չգիտենք, կա-րո՞ղ էր արդյոք թույլ տալ թուրք որևէ այլ պատ-մարան, այս աստիճանի ծիծաղելի ձևով: Նույն-իսկ Զեքի Վելիդի Տոգանի նման պանթուրքիստ պատմարանի մոտ չկան այսպիսի անհեթեթ պնդումներ:

Սելջուկ տիրակալները իբր ամենաբարյացա-կամ վերաբերմունք էին ցույց տալիս հայ ֆեոդալների նկատմամբ, երբ վերջինները բա-ցատրում էին իրենց թրքական» ծագումը: Այս-պես՝ գերի ընկած Օրբելյան Լիպարիտը, երբ «...մեկնեց խորասան ու հայտնեց, թե ինքը Թիֆլիսից ու Զինաստանից (Թուրքմենստանից) է եկել. ապա Տոդրույ բեգը ոչ մի փրկագին չը-պահանջելով, նրան ազատ արձակեց»⁵¹:

Խոսելով մոնղոլների մասին, հեղինակը ա-ռանձնակի համակրանքով գրում է իլխանների և հատկապես չազան խանի մասին, որն ըն-դունում է իսլամը մարդկության «...ամենա-մեծ ու ամենամարդկային կրոնը»⁵²:

Շնորհունով իսլամը,—գրում է նա,—իլխան-ները մեր ազգային-թուրքական (s.l.c!) պատ-մության տեսանկյունից կատարեցին խոշոր ու վճռական դեր: Իսկ որն է այդ դերը. պարզվում է հետևյալը.

«Իլխանները բռնությամբ հեթանոսական տը-սերը, եկեղեցիները և այլ պաշտամունքի վայ-րերը ավերեցին ու ավերել տվեցին. հպատակ-ներին բռնությամբ մուսուլման դարձրին: Այս իրադրությունը մեծ նշանակություն ունեցավ մեր ազգային պատմության ու մեր գոյության հա-մար: Կարա-կոյունլուների (Մամիկոնյան) և Ակ-կոյունլուների (Պահլավունի) նման մյուս օղուզ-ֆեոդալները իրենց բնակչությանը... միլիոնա-վոր թուրք ու մոնղոլների (չինգիզյանների) հետ մեկտեղ ընդունեցին մուսուլմանական կրոնը: Միայն Լեոնային Ղարաբաղում, Ճորոխի հով-տում, Կուր-Քուրալիսիի կիրճերում, Տունքելի (Դերսիմ) և Հակկարիի նման զծվարանցանելի և սաղարթախիտ անտառներով հարուստ վայրե-

րում, ինչպես նաև Տրապիզոն-Ռիզեում՝ Սև ծո-վի ափին և Սիսում՝ Միջերկրականի մոտ շա-րունակեցին գոյություն ունենալ հայ և հույն իշ-խանություններ և Անատոլիայի այս մասերի հին բնակիչները պահպանեցին իրենց կրոնն ու դա-վանանքը»⁵³:

Չազան խանի կողմից մուսուլմանություն ըն-դունելու օրը՝ 1226 թ. հունիսի 16-ը «Փոքր Ասիայի մուսուլմանական Թուրքիայի պատմու-թյան համար Կոստանդնուպոլսի նվաճմանը հա-վասարադոր նշանակություն ունեցող պատմա-կան օր է»—գրում է Ֆ. Կրրզիօզլին:

Գալով XV դարում թուրքմենական Կարա-կո-յունլու և Ակ-կոյունլու պետությունների գերիշ-խանության հաստատման պատմությանը Հայաս-տանում, Ֆ. Կրրզիօզլին թուրքմեն այս ցեղերին տեղափոխում է ոչ թե Միջին Ասիայից, այլ, ինչպես արդեն տեսանք, համարում է նրանց տեղացիներ՝ Մամիկոնյանների և Պահլավունի-ների սերունդներ: «Չազան խանի (1295—1304 թթ.) ժամանակ, երբ մեծ մասշտաբի «մուսուլ-մանական հեղափոխություն» էր գնում, Մամի-կոնյանները Ակ-կոյունլու քուլփոր ցեղերի հետ միասին, թողնելով լուսավորչական քրիստոնեու-թյունը, ամբողջովին մուսուլմաններ դարձան և XV դարի կեսերի սկզբում ստեղծեցին իրենց իշխանությունը Արճեշի շրջակայքում»⁵⁴: Հենց նույն Չազան խանի ժամանակ էլ «...Արշակու-նիների «Սուրեն Պահլավ» ճյուղից սերած Բա-յրեղրու իշխանները... իսլամացվելու մեծ հե-ղափոխության ժամանակ հրաժարվելով լուսա-վորչական քրիստոնեությունից, ընդունեցին սուն-նի մուսուլմանությունը»,—գրում է Ֆ. Կրրզի-օզլին: Կարո՞ղ է արդյոք մարդ պատկերացնել պատմության նման կեղծում:

Արդի թուրք պատմաբանները ուղում են հա-վաստիացնել, թե օսմանյան կայսրությունը օրի-նականության տիպար էր ամբողջ աշխարհի հա-մար: Շեշտվում է, որ թուրքերը փրկություն են բերել Փոքր Ասիայի ու Բալկանյան երկրների ճորտացված գյուղացիներին, և որ իբր վերջին-ները զրկարաց են ընդունել օսմանցի նվաճող-ներին»⁵⁵:

Օսմանյան կայսրության մեջ տիրող «օրինա-կանության» ու «արդարության» մասին այսպես էր արտահայտվում իր զեկուցման մեջ թուրք պատմագրության III կոնգրեսում դ-ր Շինասի Ալթընդադը. «...Որևէ մի քրիստոնյայի ձեռքից բռնությամբ մի հավ վերցնելը կամ նրա հողա-կտորում ձի արածացնելը երբեմն մինչև իսկ

⁴⁹ «Kars tarihii», էջ 400:

⁵⁰ Նույն տեղում, էջ 318:

⁵¹ Նույն տեղում, էջ 326:

⁵² Նույն տեղում, էջ 434:

⁵³ Նույն տեղում, էջ 457:

⁵⁴ Նույն տեղում, էջ 463:

⁵⁵ Şinasi Altındağ, Osmanlı idaresi ve Gürcüler, III TTK, էջ 317—323:

մահապատժի էր հասցնում: Կարճ՝ թուրքական երկրում միայն արդարությունն էր գերիշխում: Այդ պատճառով, թուրքական գերիշխանության տակ մտած այլ ազգությունները շուտով համակերպվում էին այդ գերիշխանությանը ու հոգով միավորվում նրա հետ: Վկայություն կա այն մասին, թե ինչպես անարդարությամբ սպանված մի քրիստոնյայի համար տասնմեկ ենիշերիններ մահապատիժ ստացան⁵⁶:

Պաշտոնական «թարիխ»-ում («պատմություն») ասվում է, որ իբր օսմանյան կառավարման սխտեմը ապահովում էր յուրաքանչյուր հպատակի պատիվը, ունեցվածքն ու անձը⁵⁷: էս'ատ Ուրասը այսպես է ներկայացնում իր ընթերցողներին հայերի վիճակը օսմանյան կայս-

րության մեջ. «Օսմանյան հայերը հանգիստ կյանք էին վարում, զբաղվում էին առևտրով ու արհեստներով և շատ գոհ էին իրենց վիճակից: Զինվորական ծառայությունից ազատված լինելու հետևանքով, բազմապատկվեց նրանց ընտանիքների քանակը և անց նրանց նյութական բարեկեցությունը»⁵⁸:

Եվ այսպես. կեղծիք և զառանցանք, զառանցանք ու կեղծիք,—ահա էսատ Ուրասների և Ֆահրեդդին Կըրգիօղլիների «պատմագիտական» մարզանքների բովանդակությունը: Պատմության նենգափոխման նման օրինակը, իսկապես, արտառոց և ծիծաղելի է:

Մ. ԶՈՒԱԼՅԱՆ

Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին Ս. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան. ներածությունը՝ Ս. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965:

Հայագետների երկարամյա երազանքը՝ ձեռք բերել հավաքածուներով ամենահարուստ հնագրաքաներից մեկի՝ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի ցուցակը, իրականացավ: Վերջերս լույս տեսավ Երևանի Մատենադարանի «Ձեռագրաց ցուցակ»-ը, որի տրպագրությունը տեղեկության երկու տարի: Արդեն մեր տրամադրության տակ է նաշակով տպագրված բավականին սովոր ու շքեղ կազմով գիրքը (51 մամուլից բաղկացած): Անկասկած, զրքի արտաքին տեսքը ակնհայտ կերպով ցույց է տալիս այն մեծ նվաճումը, որ ձեռք է բերված պոլիգրաֆիայի բնագավառում հարեան եղբայրական Սովետական Հայաստանում: Հիշյալ «Ցուցակ»-ի կազմողներն են Ս. Եգանյանը, Ա. Զեյթունյանը, Փ. Անթարյանը, իսկ խմբագիրները՝ Լ. Խաչիկյանը և Ա. Մնացականյանը:

Ձեռագրերով, վավերագրական աղբյուրներով հարուստ է հայ գրականությունը: Չնայած որ Հայաստանի վրայով անցել են հազար ու մի թոհ ու բոհ, ավերվել են շատ կոթողներ, աշտուսմենայնիվ փրկվել է ավելի քան 25,000 գրչաղիր, որից շուրջ 10 հազարից ավելին հավաքվել է Երևանի Մատենադարանի հարկի տակ և պահվում է խմամբով: Մնացածը գտնվում է զանազան երկրներում՝ Երուսաղեմում, Վենե-

տիկում, Վիեննայում և այլուր: Հիշյալ վայրերում մոտավորապես այնքան ձեռագրեր կան, որքան Երևանի Մատենադարանում: Իսկապես, Երևանի Մատենադարանը «աշխարհի հնագույն և ամենահարուստ մատենադարաններից մեկն է» («Մատենադարանի «Ձեռագրաց ցուցակ», էջ 11):

Հայկական ձեռագիր-հավաքածուների ցուցակներ կազմելը վաղուցվա պատմություն ունի, և այդ իմաստով շատ բան է կատարված: Տպագրված նման ցուցակների մեջ փաստագրության և արժեքի տեսակետից աչքի է բնկնում Վիեննայի հավաքածուի «Մայր ցուցակ»-ը: Հիշյալ ցուցակը կազմել է հայտնի բանասեր Հակոբոս Տաշյանը: Գիրքը լույս է տեսել 1895 թվականին, հիմնականում՝ հայերեն լեզվով (զրքում գերմաներեն լեզվով զետեղված է ամփոփիչ ցուցակը): Ուրիշ հավաքածուներից կազմված ցուցակները ստեղծելիս բանասերները մեծ մասամբ հետևել են Վիեննայի հրատարակությանը՝ բնագործակի նրանից:

Բուն Հայաստանում նույնպես եղել են ցուցակ կազմելու փորձեր, մանավանդ էջմիածնում: 1863 թ. Քրիստիան Հակոբ Կարինյանցի ծախսով տպվեց «Մայր ցուցակ ձեռագիր մատենից զբաղարանի արքայ աթոռին էջմիածնի»:

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ «Tarikh», հատ. III, էջ 3—4:

⁵⁸ Es'at Uras, Tarikte Ermentler ve ermeni meselesi, էջ 132: